Ամփոփ նյութ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ՝ բանկային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
08.01.2019 թվականի թիվ 1/01ԲԳ-Ա

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասի 1-3-րդ կետերով նկարագրված խախտումները թույլ տալու համար Բանկի նկատմամբ կիրառել ***նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ թույլ չտալու հանձնարարականով:***
2. Սույն որոշման նկարագրական մասի 4-րդ կետով նկարագրված խախտումները թույլ տալու համար Բանկի նկատմամբ կիրառել ***տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:***
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բանկ մուտքագրվելու կամ Բանկի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է երկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ